ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1953 Общественные науки

Հ. Մարտիկոնյան

Ն. Գ. ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻՆ ԵՎ ԱՆՑՅԱԼ ԴԱՐԻ 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ*

Նալբանդյանագիտության մեջ այժմ վերջնականապես ապացուցված և հաստատված պետք է համարել այն փաստը, որ Մ. Նալբանդյանը եղել է ռուս մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Ն. Գ. Չերնիշևսկու մարտական զինակիցը և որ նա ռևոլյուցիոն-դեմոկրատական իդեոլոգիայի ինչպես նաև էսթետիկայի բոլոր արմատական հարցերի մշակման բնագավառում կանգնած է եղել իր մեծ ուսուցչի դիրքերում։ Բայց մեզ մոտ վերջնականապես չի հերքվել լիբերալ բուրժուական պատմագրության հորինած այն առասպելը, որի համաձայն Նալբանդյանը իբր թե եղել է մի կղզիացած երևույթ հայ իրականության մեջ։

Փաստերը ցույց են տալիս, որ Նալբանդյանը մենակ չի գործել, նա ունեցել է իր համախոհներն ու զինակիցները, որոնց կարելի է բաժանել երկու խմբի. զինակիցների մի խումբը խիստ գաղտնի ռևոլյուցիոն աշխատանք է կատարել, ձգտելով հայ երիտասարդությունից ստեղծել ընդհատակյա ռևոլյուցիոն կազմակերպություններ, որոնք պետք է լայն աշխատանք ծավալեին հայ ժողովրդին ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի ակտիվ մասնակիցը դարձնելու ուղղությամբ։ Վերջին շրջանում ռուս գիտնականների ջանքերով հայտնաբերված նոր նյութերը ցույց են տալիս, որ Նալբանդյանը այդ աշխատանքին ձեռնարկել է Չերնիշևսկու գիտությամբ ու հանձնարարությամբ։ 1859 թվականի վերջերին վերադառնալով արտասահմանից, Նալբանդյանը հեռանում է «Հյուսիսափայլ»-ի խմբագրությունից և մեկնում Պետերբուրգ։ Այժմ ապացուցված է, որ Նալբանդյանը հենց այդ տարիներին, այսինքն մինչև 1862 թվականը (մինչև ձերբակալությունը) Պետերբուրգում եղած ժամանակ հաճախակի գաղտնի հանդիպումներ է ունեցել Ն. Գ. Չերնիշևսկու հետ, եղել է նրա ամենահավատարիմ մարտական զինակիցներից մեկը, նրա գլխավորած ընդհատակյա պետերբուրգյան ռևոլյուցիոն կենտրոնի գործիչներից մեկը։

Չերնիշևսկու նպատակն է եղել իր գլխավորած ընդհատակյա կազմակերպության կողմից նախապատրաստվող ռուսական գյուղացիական ռևոլյուցիային մասնակից դարձնել նաև ցարիզմի լծի տակ կեղեքվող մյուս ժողովուրդներին։ Նալբանդյանը լիապես համաձայն լինելով այս ծրագրին և հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության բանալին տեսնելով ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի մեջ, իր մարտական զինակիցներ Մ. Բուգաջյանի, Անանիա Սուլթանշահի, Հարություն Սվաճյանի և ուրիշների օգնությամբ լայն աշխատանք է ծավալել գաղտնի, ընդհատակյա ռևոլյուցիոն կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ։

* Զեկուցված է 1953 թ. հուլիսի 23-ին, Հայկական ՍՍՌ ԳԱ-ի գիտական սեսիայում, նվիրված Ն. Գ. Չերնիշևսկու ծննդյան 125-ամյակին։

Պետք է նշել, որ չնայած ցարական օրգաններին անհայտ մնաց Նալբանդյանի և նրա զինակիցների ընդհատակյա ռևոլյուցիոն գործունեությունը և նրա կապերը Չերնիշևսկու ու նրա մարտական զինակիցներ Ն. Սերնո-Սոլովյովիչի, Ա. Սլեպցովի և այլոց հետ, այնուամենայնիվ նրանք որոշ բան գուշակել էին. սրանով պետք է բացատրել այն համառ ջանքերը, որ գործադրեց քննիչ հանձնաժողովը Նալբանդյանի գործունեության այդ կողմերը բացահայտելու ուղղությամբ. հանձնաժողովը մի քանի անգամ Նալբանդյանից պահանջեց, որ նա «ամենայն մանրամասնությամբ» բացատրի իր «բոլոր գործողությունները» և տա այն բոլոր անձանց անունները, որոնց հետ նա հակակառավարական նպատակներով հարաբերությունների մեջ է եղել Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում, Լոնդոնում, Պոլսում և այլ վայրերում։ Սվ չնայած հարցաքննությունը ոչ մի արդյունք չտվեց, այնուամենայնիվ 1865 թ. ապրիլի 27-ին սենատի հանած դատավճռի մեջ Նալբանդյանը մեղադրվում էր ոչ միայն Լոնդոնի պրոպագանդիստների (Գերցենի և Օգարյովի) «հանցավոր մտադրություններին իրազեկ լինելու, Լոնդոնի արգելված հրատարակությունները Ռուսաստանում տարածելու գործին աջակցելու», այլև «Ռուսաստանի հարավում, հայերի մեջ, հակակառավարական շարժում ծավալելու ձգտման համար»։

Հայտնի է նաև, որ ցարական ոստիկանական օրգաններում Մ. Բուդաղյանը և Ա. Սուլթանշահը գրանցված էին որպես քաղաքական «անբարեհույս» «տարրեր». հատկանշական է նաև այն, որ երբ Բուդաղյանը դիմեց ցարական կառավարությանը իր խմբագրությամբ թերթ հրատարակելու թույլտվություն ստանալու համար, նրա դիմումը մերժվեց հենց դիմողի՝ Բուդաղյանի «քաղաքական անբարեհուսության» պատճառով։

Հարց է ծագում, թե ինչ կապ կար հայ ռևոլյուցիոն-դեմոկրատիայի սոցիալական և ազգային-ազատագրական ծրագրի և Չերնիշևսկու գլխավորությամբ նախապատրաստվող ռուսական գյուղացիական ռևոլյուցիայի միջև։

Հաճախ ոմանք հարց են տալիս, թե վերջի վերջո ինչի՛ էր ձգտում Նալբանդյանը, ինչպես էր նա պատկերացնում հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրությունը։

Այս հարցի պարզ ու հստակ պատասխանը անհրաժեշտ է ոչ միայն Նալբանդյանի բռնած դիրքը ճիշտ գնահատելու, այլև այն լրպարտությունները մերկացնելու համար, որոնց դիմում են վերջին շրջանում դաշնակցական թափթփուկները։

Դաշնակցական թերթուկներից մեկը անցյալ տարի քափ ու քրտինքի մեջ մտած փորձում էր «ապացուցել», որ Նալբանդյանը իբր թե Հայաստանը Ռուսաստանից անջատելու կողմնակից է եղել և, որ նրա ամբողջ գործունեությունը ունեցել է հենց այդ նպատակը։ Սա առաջին դեպքը չէ, երբ հայ նացիոնալիստներն ու հակառևոլյուցիոն պարտիաները աշխատում են աղավաղել Նալբանդյանի պայծառ դեմքը և նրան դարձնել իրենց հակաժողովրդական, ավանտյուրիստական քաղաքականության հոգեհայրը։ Բայց փաստերը ավելի պերճախոս են, քան ամերիկյան իմպերիալիզմի կոռքին լծված դաշնակ գրչակների, որենց տերերի թելադրանքով կարած ու կարկատած այդ «տեսությունը»։

Ազգային ազատագրական հարցը Նալբանդյանը Չերնիշևսկու ու Գերցենի հետ միասին քննության է առել ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի տեսանկյունից։ Նրա կարծիքով Ռուսաստանի ներքին դրության ամբողջ առանձնահատկությունը անցյալ դարի 60-ական թվականներին այն էր, որ

ազատության ձգտող ռուս ժողովրդի շահերը լիապես համընկնում էին ցարիզմի լծի տակ ճնշվող և ինքնուրույն ազատ կյանքի ձգտող մյուս ժողովուրդների շահերին։ Ընդհանուր թշնամին նույնն էր՝ ցարիզմը և կալվածատերերի իշխանությունը, նպատակը նույնն էր՝ հող և ազատություն։ Ռուսաստանում խմորվող ազատագրական շարժումը,— ասում էր Նալբանդյանը իր «Երկրագործության» մեջ «կարելի է մարդկային ազատություն համարել», որովհետև այդ ազատությունը հիմնվում է հողի վրա։ Ուրեմն ամենից առաջ անհրաժեշտ էր լուծել հողի՞ հարցը, ագրարային հարցը, գյուղացիական հարցը, առանց որի Նալբանդյանը Չերնիշևսկու հետ միասին չէր պատկերացնում ազատություն։ Առանց ժողովրդի տնտեսական ազատագրության, առանց ագրարային ռևոլյուցիայի, որի անմիջական հետևանքը պետք է լիներ ֆեոդալական բռնակալության տապալումը, առանց դարաշրջանի այդ գլխավոր հարցի լուծման, Նալբանդյանը չէր ընդունում և մերժելով մերժում էր ամեն մի ազգային ազատագրություն։ «Եթե ազգության ներքին և էական խորհուրդը չէ տնտեսական խնդիրը,— գրում էր նա,— անհիմն է այդ ազգությունը, սուտ է այդ ազգությունը»[1]։

Ասածներից դժվար չի հասկանալ, թե ինչու հայ ռևոլյուցիոն-դեմոկրատիայի ծրագրի մեջ կենտրոնական հարցը, Նալբանդյանի բառերով ասած կյանքի և մահու հարցը «տնտեսական խնդիրն» էր — ագրարային հարցը։ Նալբանդյանը Չերնիշևսկու հետ միասին ապացուցում էր, որ ռեֆորմը չլուծեց և չէր կարող լուծել «տնտեսական հարցը», որ ռեֆորմից հետո էլ Ռուսաստանը կանգնած է նույն «սոսկավիթխար գորդիասի կապի» — ագրարային հարցի առաջ։ Նա այդ ռեֆորմը համեմատում էր այն ցողի հետ, որ գիշերը նստում է ծառի վրա. «ցողը հազիվ հազ նստում է նորա տերևների վերա, հազիվ հազ սկսանում է զովացնել նորա ծարավը, դալարեցնել նորա խորշակահար տեսիլը և ահա... արևը ծագեցավ։ Ցողի կաթիլները հետզհետե գոլորշիանալով ցնդեցան, գնացին, իսկ տերևքը մնացին այրող ճառագայթների ազդեցության հնթակա։ Մարդուս համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելին չէ»[2],— այսպես էր գնահատում Նալբանդյանը ռեֆորմը։

Նալբանդյանը միաժամանակ բացատրում էր, թե ինչու ցարից ու կալվածատերերից այլ բան չի կարելի սպասել։ Ֆեոդալական բռնակալության դժոխային մեքենան,— ասում էր նա,— հանգչում է ազնվականների ուսերի վրա և ինչպես ցարիզմի, այնպես էլ կալվածատերերի գոյության հիմքը՝ կալվածատիրական սեփականությունն է։ Այս է պատճառը, որ ցարիզմը և կալվածատերերը չեն կարող գյուղացուն հողի հետ միասին ազատություն տալ. գյուղացու նման ազատությունը նշանակում է ցարիզմի և ճորտատերերի մահը. «Տեսավ կառավարությունը (ցարիզմը — Հ. Մ.), որ այս տեսակ ազատություն չի կարելի տալ, գուշակեց նա գալոց փոթորիկը։ Տեսավ ազնվականը և համոզվեցավ, որ այս տեսակ ազատություն տալը ազնվականության մահու դատակնիք ստորագրելն էր»[3]։

Նալբանդյանը նշում էր, որ ռեֆորմից հետո Ռուսաստանում ստեղծվել է մի այնպիսի ջերմախտական ու լարյալ վիճակ, որ գյուղացիությանը մղում է

---

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. III, էջ 91։
[2] Նույն տեղում, էջ 36։
[3] Նույն տեղում, էջ 37։

դեպի կացինը և եթե ճորտ գյուղացին չստանա այն, ինչ որ ցանկանում է— հող և ազատություն — ապա նա «կացնով կվճռե գործը»։ Եվ Նալբանդյանը իր կյանքի վերջին տարիները նվիրեց գյուղացիական հարցը «կացնով վճռելու» գործին։

Այսպիսով, Նալբանդյանը Չերնիշևսկու հետ միասին խորապես համոզված էր, որ անհնար է գյուղացիական հարցը լուծել առանց կալվածատերերի և ցարի իշխանությունը ռևոլյուցիոն ճանապարհով տապալելու, իսկ այդ հարցում շահագրգռված էր ոչ միայն ռուս ժողովուրդը, այլ ցարիզմից ու կալվածատերերից ճնշվող մյուս ժողովուրդները, որոնք ձգտում էին սոցիալական և ազգային ազատագրության։

Այլ խոսքով «Գորգիասի կապը»— տնտեսական խնդիրը որքան էլ «բազմակնճիռ» լիներ, այնուամենայնիվ Նալբանդյանի կարծիքով մի գրամ էր, որ ուներ երկու երես, տնտեսական հարցը և սրա հետ օրգանապես կապված հայրենի և օտար գավազանի հարցը։ Նրա կարծիքով հայ ազատագրական շարժումը հավասարապես պետք է ուղղված լիներ միաժամանակ երկու գավազանի դեմ՝ «օտար» և «հայրենի», այլ խոսքով պետք է ունենար հակաֆեոդալական, հակաճորտատիրական, հակաբռնակալական բնույթ։ Իսկ այս նշանակում է, որ Նալբանդյանի կարծիքով հայ ազգային ազատագրական շարժումը պետք է միաժամանակ լիներ ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժում։ Այստեղից էլ այն օրգանական կապը, որ նա տեսնում էր հայ ազգային ազատագրական շարժման և ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի միջև։

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչպես էր պատկերացնում Նալբանդյանը հայերի ազգային ինքնորոշման հարցը, ապա նրա ծրագրի այս բաժինը կարելի է ճիշտ հասկանալ միայն այն դեպքում, եթե մենք նկատի ունենանք Չերնիշևսկու և առհասարակ ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատիայի բռնած դիրքը լեհական հարցի նկատմամբ։

Հայտնի է օրինակ, որ Չերնիշևսկին ու Հերցենը պաշտպանելով լեհական ազգային ազատագրական շարժումը և նրա բախտը կապելով Ռուսաստանում դեմոկրատական ռևոլյուցիայի հաղթանակի հետ, գտնում էին, որ լեհացիները իրավունք ունեն և պետք է ձևավորվեն որպես ինքնուրույն և անկախ պետություն։ Հայտնի է նաև այն բարձր գնահատականը, որ տվել է Վ. Ի. Լենինը Հերցենի բռնած դիրքին՝ լեհական հարցի նկատմամբ. «Երբ ռուսական լիբերալների ամբողջ բազմությունը ետ քաշվեց Գերցենից Լեհաստանին պաշտպանելու պատճառով, երբ ամբողջ «կրթված հասարակությունը» երես դարձրեց «Կոլոկոլ»-ից, Գերցենը չշփոթվեց։ Նա շարունակեց պաշտպանել Լեհաստանի ազատությունը և խարազանել Ալեքսանդր 2-րդի ճնշողներին, դահիճներին, կախողներին։ Գերցենը փրկեց ռուսական դեմոկրատիայի պատիվը»[1]։

Պետք է նշել, որ Նալբանդյանն էլ իր հերթին փրկեց հայ դեմոկրատիայի պատիվը։ Իր «Երկրագործության» մեջ նա Գերցենի և Չերնիշևսկու հետ միասին պաշտպանում էր լեհացիների ազատությունը և խարազանում Ալեքսանդր 2-րդին.— «Ռուսական բանտերը լցվեցան լեհացիներով,— գրում էր Նալբանդյանը,— կարծեմ շուտով Սիբիրի մեջ ավելի շատ պիտի լինի լեհացի, քան թե Լեհաստանում։ Վարշավի հրապարակի վերա արյունը մինչև ծունկն է

Վ. Ի. ԼԵՆԻՆ. Երկեր, հատ. 18, էջ 18։

հասնում... Ռուսիո կառավարությունը իբրև մի վամպիր ծծում է Լեհաստանի արյունը, փակում է նորա եկեղեցիքը, դպրոցները...»[1]։

Թե որ չափով ճիշտ դիրք էին բռնել ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատներն ու Նալբանդյանը լեհական հարցում, այդ երևում է Մարքսի և Էնգելսի դիրքից՝ լեհական հարցում։ Մարքսը և Էնգելսը գրել են «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ում. «Լեհերի մեջ կոմունիստներն այն պարտիային են օժանդակում, որը ագրարային ռևոլյուցիան համարում է ազգային ազատագրման պայման, հենց այն պարտիային, որը առաջացրեց 1846 թ. Կրակովի ապստամբությունը»[2]։

Պաշտպանելով լեհացիների ազատությունն ու անկախությունը, Գերցենը միաժամանակ նշում էր, թե պետք է տարբերել լեհացիների ինքնորոշման իրավունքը նոր, ազատ, դեմոկրատական Ռուսաստանից անջատվելու նպատակահարմարությունից։

Ինչպես լեհացիները, այնպես էլ ցարիզմի լծի տակ ճնշվող մյուս ժողովուրդները, լիակատար իրավունք ունեն ձևավորվելու ինքնուրույն ազգային պետության մեջ և գոյություն ունենալու Ռուսաստանից անկախ, բայց նպատակահարմար է, որ ասենք ազատ և անկախ Լեհաստանը անջատվեր ազատ և դեմոկրատական Ռուսաստանից։ Գերցենը գրում էր, որ այդ միանգամայն անանպատակահարմար է. «Լեհաստանը, ինչպես Իտալիան, ինչպես Հունգարիան, լիակատար, անկապտելի իրավունք ունի Ռուսաստանից անկախ պետական գոյության։ Ցանկանո՞ւմ ենք մենք արդյոք, որ ազատ Լեհաստանը բաժանվի ազատ Ռուսաստանից—դա այլ հարց է։ Ոչ, այդ մենք չենք ցանկանում, և կարելի՞ է արդյոք այդ բանը ցանկանալ այն ժամանակ, երբ բացառիկ ազգությունները, որպես միջազգային թշնամանք, հանդիսանում են գլխավոր ամբարտակներից մեկը, որ կասեցնում է համամարդկային ազատ զարգացումը»[3]։

Գերցենի համար միանգամայն պարզ էր, որ ինչպես նոր դեմոկրատական Լեհաստանը, այնպես էլ այդ ճանապարհը բռնած մյուս ժողովուրդները չեն կարող իրենց անկախությունը և ազատությունը պահպանել առանց նոր, դեմոկրատական Ռուսաստանի աջակցության ու պաշտպանության։ Հետևաբար միացյալ ուժերով տապալելով ցարական — ճորտատիրական կարգերը, նրանք ռուս ժողովրդի հետ միասին միացյալ ուժերով էլ պետք է պաշտպանեին իրենց ազատությունն ու անկախությունը։

Առաջ քաշելով ռուս ժողովրդի և ցարիզմի լծից ազատագրված մյուս ժողովուրդների եղբայրական դաշինքի և համագործակցության անհրաժեշտությունը, Գերցենը գրում էր. «ինքնըստինքյան հասկանալի է, որ մենք խոսել ենք հավասարների ազատ դաշինքի մասին, մենք երբեք չենք խոսել ոչ նվաճումների, ոչ Ռուսաստանին բռնի կերպով միանալու մասին»[4]։

Չերնիշևսկու և Գերցենի հետ միասին ջերմորեն պաշտպանելով Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ռևոլյուցիոն շարժումների միացումը ցարիզմի դեմ մղած ռուս ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ, Նալբանդյանը նույնպես ընդունում էր ամեն մի ազգության ինքնորոշման և ազատ ու անկախ գոյության իրավունքը։ Այդ պարզ ու որոշակի երևում է լեհական, իտալական ու

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 3, էջ 89։
[2] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 73։
[3] *А. И. Герцен*, Полное собрание соч. и писем, под ред. Лемке, т. IX, стр. 463.
[4] *А. И. Герцен*, т. X, стр. 242.

բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ բռնած նրա դիրքից։ Բայց նրան միաժամանակ հայտնի էր, որ եվրոպական բուրժուական պետությունները ազգային հարցի լուծման միայն մի սկզբունք ունեն, որ նա դիպուկ կերպով բնութագրում է Խորենացուց առնված խոսքերով. «սահմանք քաջաց, զենք իւրեանց»։ Հենց այդ նկատի ուներ Գերցենը, երբ գտնում էր, որ ցարիզմի լծից ազատագրված ժողովուրդների անջատումը դեմոկրատական Ռուսաստանից, նպատակահարմար չէ, որովհետև ռուս ժողովրդի ու հենց այդ ժողովուրդների արյան գնով ձեռք բերած ազատությունն ու անկախությունը նրանք հեշտությամբ կարող են կորցնել։ Նալբանդյանը չէր կարող չհասկանալ, որ ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի հետևանքով սոցիալական և ազգային ազատագրություն ձեռք բերած հայերը սեփական ուժերով չեն կարող պաշտպանել իրենց անկախությունն ու ազատությունը։ Նա լիապես համաձայն է եղել Գերցենի ծրագրին, այդ շատ որոշակիորեն երևում է նրանից, որ նա իր «Երկրագործության» մեջ Չերնիշևսկու ու Գերցենի հետ միասին ամենայն վճռականությամբ պաշտպանում է ժողովուրդների ազատ համագործակցության, փոխադարձ օգնության ու օժանդակության գաղափարը։

Կան նաև այլ փաստեր. այժմ ապացուցված է, որ «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության հիմնադիրը և ղեկավարը եղել է Ն. Գ. Չերնիշևսկին[1]։ Հսկայական նախապատրաստական աշխատանք տանելուց հետո պետերբուրգյան ռևոլյուցիոն կենտրոնը 1862 թվականի սկզբներին հասունացած է համարում ռուսական ընդհատակյա ռևոլյուցիոն կազմակերպություն ստեղծելու հարցը և նույն 1862 թվականի սկզբներին կազմակերպչորեն ձևավորվում է այդ կազմակերպությունը «Զեմլյա ի վոլյա» անունով։ Հայտնի է, որ Չերնիշևսկու մարտական զինակիցներ Ն. Սերնո-Սոլովյովիչի, Ա. Ալեպցովի, Վ. Կուրոչկինի և մյուսների Լոնդոնում վարած բանակցությունների հետևանքով Գերցենը և Օգարյովը մտան «Զեմլյա ի վոլյա» կազմակերպության կենտրոնական կոմիտեի կազմի մեջ։ Հայտնի է նաև, որ Մ. Նալբանդյանը նույնպես մասնակցել է այդ բանակցություններին ամենայն հավանականությամբ որպես Չերնիշևսկու ներկայացուցիչ։ Այս լույսի տակ հասկանալի է դառնում այն բնութագիրը, որ տվել են Նալբանդյանին Գերցենը և Օգարյովը։ Նրանք Ն. Սերնո-Սոլովյովիչի գրած նամակում իրենց «արևելյան բարեկամին» անվանում էին ոչ միայն «գերազնվագույն» մարդ, «ոսկի հոգի» ունեցող մարդ, այլև հատկապես ընդգծում էին, որ Նալբանդյանը «նվիրված է անշահախնդիր, նվիրված է... սրբության հասնող չափով»։ Խոսքը իհարկե ռուսական դեմոկրատական ռևոլյուցիայի մասին էր, որի հետ օրգանապես կապվում էր ցարիզմի լծի տակ ճնշվող մյուս ժողովուրդների ազատագրությունը այն ձևով, ինչպես գրում էր Գերցենը։

* *

Եթե Նալբանդյանը և նրա զինակիցների առաջին խումբը պայքարել են վերոհիշյալ ծրագիրը իրագործելու համար, ապա նրա զինակիցների երկրորդ խումբը ըստ երևույթին կոնկրետ ընդհատակյա աշխատանք չի տարել. այս

[1] Տես Վ. Գ. Բասկակովի հոդվածը „Великий деятель революционной России Н. Г. Чернышевский" („Вопросы философии", 1953 г., № 3).

խմբին պատկանող գործիչները մեծ մասամբ եղել են համախոհներ և Նալբանդյանի ձերբակալության տարիներին ու մահից հետո շարունակել են պայքարել գլխավորապես այն սկզբունքների պաշտպանության համար, որ հռչակել էր Նալբանդյանը մասնավորապես էսթետիկայի բնագավառում։

Նալբանդյանի այս կարգի համախոհների համար հատկանշականը ամենից առաջ այն է, որ նրանք չնայած բոլորն էլ բացի Նալբանդյանի գործերից քաջ ծանոթ են Բելինսկու և Չերնիշևսկու աշխատություններին, բայց իրենց ոչ մի հոդվածում չեն հիշատակում ո՛չ Նալբանդյանի և ո՛չ էլ Չերնիշևսկու անունը։

Եվ դա մեզ չպետք է զարմացնի. 60-ական թվականներին Չերնիշևսկու և Նալբանդյանի անվան հիշատակումը, մասնավորապես նրանց ձերբակալությունից և աքսորից հետո, արգելված էր և կապված մեծ անախորժությունների հետ։ Ինչպես հայտնի է ինքը՝ Նալբանդյանը իր ոչ մի աշխատության մեջ չի հիշատակել Չերնիշևսկու անունը, չնայած նույնիսկ բանտում գրած հոդվածներում ընդարձակ քաղվածքներ է բերում նրա աշխատություններից։ Այս խիստ, պրոֆեսիոնալ ռևոլյուցիոներին հատուկ գաղտնապահությունն էր պատճառը, որ ցարական ոստիկանական օրգանները Նալբանդյանից ոչինչ չկարողացան իմանալ նրա և Չերնիշևսկու կապերի մասին։

Թե ինչպիսի ծանր քաղաքական մեղադրանքների հետ էր կապված նույնիսկ Նալբանդյանի անվան հիշատակումը հայ մամուլում, ցույց է տալիս հետևյալ փաստը. «Մեղու Հայաստանի»-ն (Պ. Սիմոնյանի) Ստեփանեի հետ 1867 թվականին բանավիճելիս տալիս է Կոմս Էմմանուելի անունը, նրան համարելով շնորհալի գրող։ Այս բավական էր, որպեսզի Ստեփանեն եզրակացներ, որ «Մեղու Հայաստանի»-ի խմբագրությունում գոյություն ունի ինչ որ գաղտնի ընկերություն, որի անդամները խմբագրի հետ միասին հափշտակվել են Նալբանդյանով։ Մեղադրանքը այնքան ծանր էր, որ «Մեղու»-ի խմբագրությունը անմիջապես հանդես եկավ պատասխան հոդվածով և հայտարարեց, որ խմբագրությունը ոչ մի տեղ Նալբանդյանի անունը չի տվել։ «Մեղու»-ն նշում էր, որ Ստեփանեն փոխանակ ըստ էության պատասխանելու քննադատությանը «ուրուս փոխարեն մեր Նալբանդյանով հափշտակվելն էք առաջ բերում. չգիտենք հանգուցյալ Նալբանդյանի անունը ինչու էք հանդես բերել, երբ մենք մեր հոդվածի մեջ նորա անունը հիշած չէինք»[1]։

Այս պատճառաբանությունը այսօր կարող է տարօրինակ թվալ, որովհետև բոլորին հայտնի էր, որ Կոմս Էմմանուելը նույն Նալբանդյանն էր։ Բայց «Մեղու»-ն ձևականորեն իրավացի էր. ցարական գրաքննությանը արգելել էր Նալբանդյանի անունը հիշատակել մամուլում դրական իմաստով. հայհոյել կարելի էր և Այվազովսկու «Մասյաց աղավնի»-ն, ինչպես նաև Ստեփանեի «Հայկական աշխարհ»-ը հայհոյում էին։ Ըստ երևույթին ցարական գրաքննությունը հաշվի չէր առել, որ Նալբանդյանը ուներ կեղծ անուններ և նրա մասին դրական խոսողները կարող էին Նալբանդյանի փոխարեն գրել Կոմս Էմմանուել կամ մի այլ բան։

Համենայն դեպս «Մեղու»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանը, որ Նալբանդյանի մահվան մասին հաղորդագրություն տպելու պատճառով առնված էր կասկածանքի տակ, շտապեց իր թերթում այսպիսի հայտարարություն անել. «Իսկ ինչ կվերաբերվի մեր հափշտակվելուն Նալբանդյանցի նման մարդիկնե-

[1] «Մեղու Հայաստանի», 1867, № 40, էջ 347։

ռով, կասենք, որ երբեք հափշտակված չենք։ Ինչպես մեր անցյալ հոդվածներում էլ հայտնել ենք չափազանց հափշտակվելը ինչի նման է»։

Այս պայմաններում միանգամայն հասկանալի է, թե ինչու անցյալ դարի 60-ական թվականներին հայ մամուլում Չերնիշևսկու անվանը գրեթե չենք հանդիպում։

Եվ այնուամենայնիվ Չերնիշևսկին եղել է հայ առաջավոր դեմոկրատական ինտելիգենցիայի շրջանում ամենից սիրված ու հարգված գործիչներից մեկը։ Նրան կարդացել են, նրա այս կամ այն աշխատությունից քաղվածք են բերել առանց հիշատակելու նրա անունը։

Թե ինչպիսի մեծ հեղինակություն է ունեցել Չերնիշևսկին, ցույց է տալիս թեկուզ այն փաստը, որ նույնիսկ Բելինսկու մասին խոսելիս, որի անունը ազատ հիշատակվում էր հայ մամուլում, ընթերցողների ուշադրությունը հրավիրում էին «Սովրեմեննիկ»-ի այն համարների վրա, որտեղ հրապարակվել էր Չերնիշևսկու «Գոգոլյան շրջանի ռուս գրականության ակնարկները» աշխատությունը։ Այսպես, հայ նոր ռեալիստական թատրոնի և քննադատական ռեալիզմի առաջին ներկայացուցիչներից մեկը՝ Միքայել Պատկանյանը ռեալիստական թատրոնի ու կոմեդիայի գոյության իրավունքը պաշտպանող իր հոդվածներից մեկում վկայակոչելով Բելինսկուն և նրանից մի ընդարձակ քաղվածք բերելով, տողատակի ծանոթագրության մեջ գրում է. «Էս երևելի հեղինակի (Բելինսկու — Հ. Մ.) գերազանց գիտությունների և մանավանդ կրիտիկի արժանավորության և աննման վսեմության համար տե՛ս «Современник» օրագրի 1856 թ. № XII»[2]։

Խոսքը Չերնիշևսկու վերոհիշյալ աշխատության մասին էր, որը լույս էր տեսել «Современник»-ի 1855 թ. № 12 և 1856 թ. № 1, 2, 4, 7, 9—12 համարներում և որտեղ Չերնիշևսկին հանգամանորեն կանգ առնելով Բելինսկու վրա, առաջին անգամ տվել էր նրա թողած գրական ժառանգության փայլուն բնութագիրն ու գնահատականը։

Սակայն մեզ համար ներկա դեպքում էականը նման փաստերը չէին, որոնց թիվը կարելի է բազմացնել, այլ այն հսկայական ազդեցությունը, որ գործել է Չերնիշևսկին հայ դեմոկրատական կուլտուրայի ներկայացուցիչների վրա։

Մենք մի այլ առիթով ցույց ենք տվել, թե ինչպես Միքայել Նալբանդյանը հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկայի հիմքերը դնելով, յուր առաջ դրված հարցերը չէր կարող հաջողությամբ լուծել, եթե չհենվեր Չերնիշևսկու էսթետիկայի վրա և լայնորեն ու ստեղծագործորեն չոգտագործեր իր մեծ ուսուցչի գլխավոր դրույթները։ Այժմ պետք է նշենք, որ Նալբանդյանը հայ ռևոլյուցիոն, դեմոկրատական էսթետիկա ստեղծելու համար մղած իր պայքարում նույնպես մենակ չի եղել, այս բնագավառում նույնպես նա ունեցել է իր համախոհներն ու դինակիցները։

Հայտնի է, որ Չերնիշևսկին տնտեսագիտության, քաղաքականության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, էթիկայի ու էսթետիկայի հարցերը քննության էր առնում ամենից առաջ դեմոկրատական ռևոլյուցիայի տեսանկյունից։ Նրա ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկայի անկյունաքարը, վերջիվերջո

---

[1] «Մեղու Հայաստանի», 1860, № 45։

[2] Նույն տեղում։

այն էր, որ արվեստը և գրականությունը պետք է դառնան գոյություն ունեցող ցարական-ճորտատիրական կարգերը մերժելու հզոր միջոցներից մեկը, ժողովրդի ազատագրական պայքարի հզոր զենքերից մեկը։

Բայց այս խնդիրը հաջողությամբ իրագործելու համար նախ և առաջ անհրաժեշտ էր հաշիվը մաքրել իդեալիստական էսթետիկայի հետ, որը այն ժամանակ Արևմտյան Եվրոպայում դեռևս իշխող դիրքեր էր գրավում և որի կողմնակիցները Ռուսաստանում Բելինսկու մահից հետո բավականաչափ աշխուժացել էին։

Կատաղորեն պաշտպանելով այսպես կոչված «մաքուր արվեստի», «արվեստը արվեստի համար» ռեակցիոն տեսությունը, իդեալիստական էսթետիկայի ներկայացուցիչները Ռուսաստանում ձգտում էին ուշադրությունը շեղել դարաշրջանի կենտրոնական հարցի՝ գյուղացիական հարցի շուրջը ծավալված պայքարից, գրականությունից և արվեստից խլել այն հսկայական գերը, որ նրանք պետք է խաղային ռուս ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ։

Բելինսկու և Չերնիշևսկու կատարած պատմական խոշոր դերը այն էր, որ նրանք մահացու հարված հասցնելով գերմանական իդեալիստական էսթետիկային, հենց դրանով ջախջախիչ հարված հասցրին նաև այդ էսթետիկայի ներկայացուցիչներին Ռուսաստանում և ստեղծեցին նոր էսթետիկա, ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկա, որը նախամարքսյան էսթետիկայի պատմության մեջ ամենամեծ նվաճումն էր։

Պետք է նշել, որ գերմանական իդեալիստական էսթետիկան իր կողմնակիցներն ուներ նաև հայ իրականության մեջ։ Եվ այստեղ խոսքը չի վերաբերվում միայն Ստեփանոս Նազարյանին, որն այսպես կոչված «մաքուր արվեստի», «մաքուր», «անշահախնդիր գեղեցիկի» այլ խոսքով «արվեստը արվեստի համար» տեսության առաջին մոնետիկներից մեկն էր։ Կային նաև այդ տեսության այլ կողմնակիցներ։ Այսպես, օրինակ, «Կռունկ»-ի 1861—62 թթ. համարներում լույս տեսավ մի հոդվածաշար «Բանաստեղծության վրա» խորագրով, որի հեղինակն է Բարսեղ Բաստամյանցը։ Նա չնայած հավատացնում էր, որ իր հոդվածը, ինչպես ինքն էր գրում «հնարել եմ ռուսաց «Պելինսքի» ասված առաջին քննիչեն, որ եվրոպացոց մեջ ալ անուն ունի», բայց Բելինսկուն ընկալում էր որպես «մաքուր արվեստի» տեսության տիպիկ ու համոզված ներկայացուցիչ։ Սահմանելով բանաստեղծության էությունը, Բաստամյանցը գրում էր, որ «բանաստեղծությունը ինքն իրեն համար նպատակ է», որ «գեղեցիկը և գեղեցկությունը... ինքն իրեն նպատակ է», որ «բանաստեղծը նկարիչ է և ոչ ուսուցիչ և խրատիչ», որ «բանաստեղծը քամիին պես ազատ է»։ Ինչ վերաբերվում է այն դերին, որ պետք է կատարի գրականությունը հասարակական կյանքում, Բաստամյանցը գրում էր, որ գրողը «հասարակության շահին չծառայեր»։ Եթե այդպես լինի, ապա այն ժամանակ գրականությունը «գեղարվեստական հոդվածներ (գործեր — Հ. Մ.) ունենալու տեղ» կունենա այնպիսի գործեր, որտեղ կերևան միայն կուսակցության շնչին կրքերու հոտեր, խևությունները»։

Դժվար չի նկատել, որ այս դատողությունները մեր իմացած Բելինսկու հետ ոչ մի կապ չունեն, այլ ստեղված են գերմանական իդեալիստական էսթետիկայի զինանոցից։

Կար նաև իդեալիստական էսթետիկայի մի այլ ներկայացուցիչ և դա 1865

թվականին Թիֆլիսում լույս տեսած «Պատմություն հայոց գրականության» աշխատության հեղինակ Ստեփան Պալասանյանն էր։

«Մեղու»-ի 1866 թվականի № 3-ում այդ գրքի մասին լույս տեսավ մի ռեցենզիա, որի հեղինակն է Գևորգ Եվանգուլյանը։ Մինչ այդ Եվանգուլյանը «Մեղու»-ում հանդես էր եկել նաև մի քանի այլ հոդվածներով, որոնց մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում հատկապես երկուսը՝ «Պատմության դասավանդությունը ինչպես է և ինչպես պետք է լինի մեր դպրոցներում»[1] և քիչ առաջ հիշատակված ռեցենզիան։

Եվանգուլյանի մեզ հայտնի հոդվածներից երևում է, որ նրա աշխարհայացքի վրա բավականին ուժեղ է Նալբանդյանի և Չերնիշևսկու ազդեցությունը, չնայած նա նրանց անունը ոչ մի տեղ չի հիշատակում։

Պատմության դասավանդման մասին գրած հոդվածում, իբրև բնաբան բերելով Հերդերի այն խոսքերը, թե «մենք սովորում ենք ոչ թե դպրոցի այլ կյանքի համար», Եվանգուլյանը գրում էր. «Այս միտքը մեր դարին է պատկանում, մեր դարն է, որ գիտության մշակած հետևանքները՝ դարձյալ կյանքին է դարձնում, մեր դարն է, որ ոչնչացնում է մի քանի գերմանական փիլիսոփաների միտքը, թե «գիտությունը գիտության համար է, իսկ կյանքը՝ կյանքի համար»։ Թեպետ և ասում եմ, որ մեր դարի մարդիկ են այդպես մտածում, բայց ոչ ամենքը, դարձյալ շատերն են գտնվում... որ չեն կարողացել թողնել իրենց պապերից ստացած ավանդությունները, չեն կարողացել թողնել սքոլաստիկությունը թե՛ կյանքի և թե՛ գիտության մեջ։ Բայց մեր պարտականությունն է աշխատել այդպիսիների թիվը պակասացնել, մեր իդեալական մտածողությունը ռեալական դարձնել...»։

Տողատակի ծանոթագրության մեջ Եվանգուլյանը բացատրում է, որ «իդեալական» և «ռեալական» տերմիններն ինքը գործ է ածում իդեալիզմի և մատերիալիզմի իմաստով, որոնք փիլիսոփայության մեջ երկու հակադիր ուղղություններ են։ Հետաքրքիր է նշել, որ Եվանգուլյանը բնութագրելով իդեալիզմը գրում էր, որ կան երկու կարգի իդեալիստներ. մի կարգին դասում էր նա Հեգելին, Կանտին, Շելլինգին, իսկ մյուս կարգին՝ Բերկլիին, Յումին և Ֆիխտեին։ Ճիշտ է իդեալիզմի տված նրա սահմանումը անկատար է, թերի, ոչ հստակ, բայց չժվար չի նկատել, որ նրա մոտ խոսքը վերաբերվում էր օբյեկտիվ և սուբյեկտիվ իդեալիզմին։

Վերոհիշյալ հոդվածներում հանդես գալով որպես իդեալիզմի հակառակորդ և մատերիալիզմի պաշտպան, Եվանգուլյանը Չերնիշևսկու և Նալբանդյանի դիրքերից քննադատում և մերժում էր «գիտությունը գիտության համար», «արվեստը արվեստի համար», «գեղեցիկը գեղեցիկի համար» ռեակցիոն տեսությունները և ապացուցում, որ դրանք բոլորն էլ կյանքի համար են, «ժողովրդի համար» և որ այժմ այս նոր հայացքն է, որ դառնում է իշխող։ «Այսպիսի հայացվածքը մարդոց խոր քնիցը վեր կացրեց, ստիպեց փոխանակ փիլիսոփայական քարը կամ կենսատու հեղանյութը որոնելու, աշխատել բարելավեցնելու իսկական կյանքը, փոխանակ առանձնասենյակներում նստած մարդկության բարելավեցնելու համար տրակտատներ գրելու, դուրս գալ, ժողովրդի մեջ մտնել, նրա ցավերը տեսնել և աշխատել այդ ցավերը ուղղելու»։

Եվանգուլյանը ծառանում էր պատմության դասավանդման այն պրակտի-

[1] «Մեղու Հայաստանի», 1865 թ., № 9, 10 և 11։

կայի դեմ, երբ ամեն ինչ վեր են ածում թագավորների ու զորավարների պատմության, իսկ ժողովրդի մասին ոչինչ չեն պատմում։

«Ուրեմն ինչպես պետք է լինի պատմության դասավանդությունը մեր դպրոցներում,— հարց էր տալիս նա և պատասխանում,— ահա թե ինչպես. թող փոխանակ հաստ գրքերի լինեին բարակ գրքեր, բայց փոխանակ պատերազմական գործողությունների, անհամար թվանշանների և հստակ անունների լինեին ժողովրդի ներքին կյանքի պատկերները, նրա ցանկությունները, ամենօրյա պարապմունքները...»։

Ինչպես հայտնի է իդեալիստական էսթետիկան արվեստի էությունը սահմանափակելով գեղեցիկով պնդում էր, որ արվեստը ծնվում է իրականության մեջ եղած գեղեցիկի պակասությունները լրացնելու պահանջից։ Չերնիշևսկին իր «Արվեստի էսթետիկական հարաբերությունը իրականության նկատմամբ» աշխատության մեջ ջախջախիչ քննադատության ենթարկելով այդ տեսությունները ապացուցեց, որ արվեստը չի սահմանափակվում գեղեցիկի բնագավառով, այլ վերարտադրում է այն ամենը, ինչ կյանքի մեջ հետաքրքիր է մարդուն և որ արվեստը բնավ էլ չի ծնվել կյանքի մեջ եղած գեղեցիկի պակասությունները լրացնելու ցանկությունից. կյանքի, օբյեկտիվ իրականության մեջ եղած գեղեցիկը լիապես բավարարում է մարդուն։

Հայտնի է, որ Նալբանդյանը լիապես պաշտպանում էր Չերնիշևսկու առաջադրած այդ սկզբունքները։ Չերնիշևսկու և Նալբանդյանի դիրքերում էր կանգնած նաև Եվանգուլյանը։

Ստ. Պալասանյանի հայ գրականության պատմության մասին գրած ռեցենզիայում Եվանգուլյանը հնացած համարելով նրա հայացքները նկարչության, քանդակագործության և արվեստի մյուս ճյուղերի մասին, Պալասանյանից բերում է մի այսպիսի վերին աստիճանի հետաքրքիր քաղվածք — «Գեղարվեստը... կազմում են իդեալական աշխարհը, որ իրական աշխարհը լրացնելու և զարդարելու է ծառայում»։ Շարունակելով իր միտքը, Պալասանյանը եզրակացնում էր, որ արվեստը «մարդուս դեպի գեղեցիկն ունեցած ձգտման բավականություն տվող միջոցներից մինն է»։

Այս դատողությունների կապակցությամբ Եվանգուլյանը գրում է, որ իսկապես առաջ ասում էին, թե արվեստը լրացնում և գեղեցկացնում է իրական աշխարհը, բայց այժմ անթույլատրելի է «գեղարվեստին այդպիսի մեկնություն տալը»։ «Մի՞թե գեղարվեստի և առհասարակ բանաստեղծության նշանակությունն է,— գրում էր Եվանգուլյանը,— պարապել միայն գեղեցիկով, իդեալներով, մի՞թե բանաստեղծության պտուղ չի ասվի այն գործը, որը ներկայացնում է անսահման աղքատությունը, վերին աստիճանի հարբեցողությունը... կամ թե սոքա էլ լրացնում ու գեղեցկացնում են իրական պիտույքը»։

Ինքը հարցադրումը ուրդեն ցույց է տալիս, որ մենք գործ ունենք մի հեղինակի հետ, որ յուրացրել է Չերնիշևսկու էսթետիկայի հիմնական դրույթները. բայց Եվանգուլյանը այդ դրույթները կրկնում է ոչ թե մեխանիկորեն, այլ պաշտպանում իբրև համոզված մատերիալիստ։

Վերոհիշյալ քաղվածքից պարզ երևում է, որ Եվանգուլյանը Նալբանդյանի հետ միասին պաշտպանում է Չերնիշևսկու դիսերտացիայի այն գլխավոր դրույթներից մեկը, որ արվեստի ու գրականության բնագավառը չի սահմանափակվում գեղեցիկով, որ նրանց բնագավառը ավելի լայն է, քան գեղեցիկը, կյանքում կան օրինակ այնպիսի երևույթներ, ինչպես ժողովրդի անսահման

աղքատությունը և միթե այդ աղքատությունը պատկերացնող գործերը չպետք է համարվեն «բանաստեղծության» պտուղ և եթե պետք է համարվեն, ապա մի՞թե աղքատությունը լրացնում և գեղեցկացնում է կյանքը։

«Եվ ինչ է նշանակում այս բառը» լրացնել և զարդարել իրական աշխարհքը»,— շարունակում է Եվանգուլյանը,— կարծես մի ուրիշ աշխարհք էլ կա, որ իրական չէ. գիտեմ՝ կասեն կա մտավոր աշխարհքը, կա բարոյական աշխարհքը, բայց սոքա մի՞թե իրական չեն, եթե իրական չլինեին, չեինք էլ ասի, թե դոքա կան կամ չկան։ Բայց եթե կասեն, թե մենք իրական աշխարհքին հակառակ ենք գնում այն աշխարհքին, որտեղ ծնվում են... անձիքների գաղափարները... այն ժամանակ սորան պատասխանում ենք, թե արդյոք ո՞րտեղից ենք վերցնում այդ գաղափարները, եթե ոչ իսկ իրական աշխարհքից»[1]։

Նալբանդյանը Չերնիշևսկու հետ միասին ապացուցում էր, որ մարդը իր գաղափարները վերցնում է բնությունից, իրական աշխարհից, ինչպես տեսնում ենք նույն բանը գրեթե բառացիորեն ասում է Եվանգուլյանը։

Նա իր այդ միտքը ապացուցելու համար վերցնում է քաջության գաղափարը ժողովրդական երգերի մեջ։ Որ՞տեղից է ծագել այդ գաղափարը. սկզբում մարդու գլխո՞ւմ է եղել և անցել ժողովրդական երգերին, թե ընդհակառակը քաջությունը եղել է կյանքում, որպես ռեալ օբյեկտիվ իրողություն և հետո անցել ժողովրդական երգերին։

Այս հարցին պատասխանելու համար Եվանգուլյանը վերցնում է Վահագնի ծնունդը. «Հայերը երգեցին Վահագնին և զարմանալի շնորհքներ տվին նրան, որտեղից առան այդ բանը, եթե ոչ զանազան քաջ հերոսների գործքերը մինին սեպհականելով»[2]։

Այսպիսով ոչ թե քաջության իդեալից է ծնվել ինքը քաջությունը. մարդկանց քաջագործությունները գոյություն են ունեցել այդ գաղափարից առաջ և ինքը քաջության գաղափարը ոչ այլ ինչ է, այլ եթե ռեալ իրական քաջագործությունների արտացոլումը։

Իր այս թեզը տարածելով սկանդինավյան և հունական բանահյուսության վրա, Եվանգուլյանը ապացուցում էր, որ արվեստը և գրականությունը ոչ թե լրացնում և գեղեցկացնում են աշխարհը, այլ հանդիսանում են կյանքի վերարտադրությունը, արտացոլումը, իսկ սա այն գլխավոր միտքն է, որ կարմիր թելի նման անցնում է Չերնիշևսկու և Նալբանդյանի աշխատությունների մեջ։

Եվանգուլյանը Չերնիշևսկու և Նալբանդյանի փիլիսոփայական մատերիալիզմի դիրքերից քննության է առնում նաև դիցաբանության ծագման ու զարգացման հարցերը, քայլ առ քայլ հերքելով Պալասանյանի բոլոր իդեալիստական դատողությունները նաև այս բաժնում։

Եթե մենք համառոտակի կանգ առինք միայն Գևորգ Եվանգուլյանի վրա, ապա այդ չի նշանակում, թե Նալբանդյանի երկրորդ խմբին պատկանող համախոհների միմը նրանով սպառվում է։ Կան նաև այլ գործիչներ, բայց դրանց մասին խոսելը դուրս է մեր ներկա ծրագրից։

Թվում է թե բերած փաստերն էլ բավականաչափ գաղափար են տալիս հայ դեմոկրատական մտքի վրա ունեցած այն հսկայական և բարերար ազդեցության մասին, որ գործել է անցյալ դարի 50—60-ական թվականներին ռուս ժողովրդի մեծ զավակ Նիկոլայ Գավրիլովիչ Չերնիշևսկին։

[1] «Մեղու Հայաստանի», 1860, № 3։

[2] Նույն տեղում։